Հաշվետվություն

2009 թ-ի հոկտեմբերի 29-ին Լոռու մարզի ոստիկանության վարչության 6 բաժիններում իրականացված դիտարկումների և բացահայտված խնդիրների վերաբերյալ

Սույն հաշվետվությամբ ներկայացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի, Բազումի, Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի եւ Ալավերդու բաժիններում իրականացված դիտարկումների արդյունքները:
Դիտարկումներն իրականացվել են <Altus Global Alliance> միջազգային կազմակերպության կողմից՝ 16 երկրներում իրականացվող ծրագրի շրջանակներում:
Դիտարկումների համար կազմակերպությունը նախապես թույլտվություն է ստացել ՀՀ ոստիկանությունից: Դիտարկումները հիմնականում իրականացվել են առանց խոչընդոտների:
Որպես գործիք են հանդիսացել <Altus Global Alliance> միջազգային կազմակերպության կողմից մշակված գնահատման թերթիկները, որոնք ներառում են հետեւյալ չափանիշները.

- քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների մատչելիությունը եւ հասանելիությունը
- քաղաքացիների հետ աշխատանքում՝ ներառյալ հարցաքննությունների, ճանաչման ներկայացման ժամանակ քաղաքացիների տվյալների գաղտնիության եւ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքների պահպանումը
- ոստիկանության հաշվետվողականությունը հասարակության առջեւ
- ոստիկանության աշխատակիցների աշխատանքային պայմանները՝ ներառյալ առկա նյութատեխնիկական ռեսուրսները
- ձերբակալված անձանց պահման պայմանները

<u>Ոստիկանության բաժինների կողմից քաղաքացիներին տրամադրվող ծառայության մատչելիությունը եւ հասանելիությունը</u>

Իրականացված դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ հասարակության համար ոստիկանության վերը նշված բաժինների կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու հնարավորությունը գնահատվում է բավարար, այնուամենայնիվ մտահոգություն են առաջացնում հետեւյալ հարցերը:

Թեեւ ոստիկանության դիտարկված բոլոր բաժինները գտնվում են քաղաքների կենտրոնական մասերում, սակայն նրանց տեղակայման վերաբերյալ քաղաքներում ցուցանակ չկա:
Ոստիկանության բաժիններում քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է հերթապահ մասում, սակայն չկան քաղաքացիների համար նախատեսված հատուկ սպասասրահներ: Դիտարկված բաժիններից ոչ մեկում փակցված չեն դիմումների, հայտարարությունների ներկայացման օրինակելի ձեւեր, ոստիկանության աշխատակիցների գործողությունների բողոքարկման համար դիմումի օրինակելի ձեւեր:
Ոստիկանության բաժիններում քաղաքացիներին չի տրամադրվում մասնագիտական խորհրդատվություն՝ հոգեբանական, իրավաբանական, թարգմանչական եւ այլն, չկան սոցիալական աշխատողներ:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am,
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Սպիտակի, Ստեփանավանի եւ Ալավերդու բաժիններում է փակցված քաղաքացիների կողմից դիմումների, հաղորդումների ներկայացման եւ դրանց քննության կարգը, դիմողների իրավունքները:

Բոլոր բաժիններում փակցված էր քաղաքացիների ընդունելության օրերի եւ ժամերի, աշխատակիցների աշխատասենյակների տեղակայման վերաբերյալ ուղեցույց, շենքի հատակագիծը, ինչպես նաեւ հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ հայտարարություն:

Վանաձորի բաժնում փակցված է ձերբակալված եւ կալանավորված անձանց իրավունքների եւ պարտականությունների, իսկ Սպիտակի բաժնում՝ նաեւ ձերբակալվածի հարազատների իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ հուշաթերթիկ:

Ոստիկանության Բազումի բաժանմունքի ժամանակավոր պահման վայրերում /ԺՊՎ/ լուսավորությունն անբավարար էր:

Սպիտակի բաժնի ԺՊՎ-ն գտնվում էր ոչ մաքուր վիճակում, կար տհաճ հոտի առկայություն:

Ոստիկանության դիտարկված բաժինները հարմարեցված չեն հաշմանդամ անձանց պահանջմունքներին:

<u>Ոստիկանության հաշվետվողականությունը՝ հասարակության առջեւ</u>

Ոստիկանության բաժիններում չկա որեւէ տեղեկատվություն բաժնի կողմից իրականացված աշխատանքների, դրանց արդյունքների վերաբերյալ: Մասնավորապես՝ չկա տեղեկատվություն տվյալ քաղաքում տվյալ ժամանակահատվածում հարուցված քրեական գործերի, դատարան հանձնված գործերի, բացահայտված հանցագործությունների քանակի վերաբերյալ, հանցագործությունների տարածվածության մակարդակի վերաբերյալ՝ ըստ դրանց ծանրության աստիճանի:

Փակցված չէ որեւէ տեղեկատվություն /սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ/ այն մասին, թե որքանով են քաղաքացիները բավարարված ոստիկանության տվյալ բաժնի գործունեությունից:

<u>Քաղաքացիների հետ աշխատանքում քաղաքացիների տվյալների գաղտնիության եւ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքների պահպանումը</u>

Ոստիկանության բոլոր բաժիններում քաղաքացիների հարցաքննությունների համար առանձնացված սենյակներ չկան: Գործող պրակտիկայի համաձայն՝ բոլոր հարցաքննությունները /կասկածյալի, վկայի, տուժողի/ իրականացվում են քննիչների աշխատասենյակներում, որտեղ ցանկացած պահի կարող են մտնել ոստիկանության այլ աշխատակիցներ: Միայն ոստիկանության Թումանյանի բաժնում է, որ երեխաների հարցաքննության համար առանձին սենյակ կա:

Կասկածյալները վկաների կողմից ճանաչման են ներկայացվում նույն սենյակում, ինչը մտահոգություն է առաջացնում, քանի որ չի ապահովվում վկաների գաղտնիությունը եւ նրանց հետագա անվտանգությունը:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am,
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Ընտանեկան բռնության կամ բռնաբարությունների զոհերի հարցաքննությունները եւս իրականացվում են տղամարդ քննիչների կողմից: Ոստիկանության կին աշխատակիցները ներգրավվում են միայն իգական սեռի անձանց անձնական զննության ժամանակ:

<u>Ոստիկանության աշխատակիցների աշխատանքային պայմանները՝ ներառյալ առկա նյութատեխնիկական ռեսուրսները</u>

Դիտարկված բաժինների շենքային պայմանները /վերանորոգումը, կահավորումը, աշխատանքային պայմանները/ հիմնականում գնահատվում են բավարար:
Թե՛ շենքի վերանորոգման, թե՛ տեխնիկական հագեցվածության եւ թե՛ սանիտարահիգիենիկ պայմանների տեսակետից շատ լավ վիճակում է Ոստիկանության Թումանյանի բաժինը:
Անբավարար են ոստիկանության Տաշիրի բաժնի աշխատանքային պայմանները, քանի որ որոշ աշխատասենյակներում աշխատում են մինչեւ 9 աշխատակիցներ:

Բացառությամբ Ստեփանավանի եւ Թումանյանի բաժինների՝ ոստիկանության մյուս բաժիններում ոչ բոլոր աշխատասենյակներն են ապահովված համակարգիչներով, գույքը շատ հին է, չկա օդափոխման համակարգ, օդափոխությունը հիմնականում իրականացվում է պատուհանների միջոցով:

Թեեւ ոստիկանության Ստեփանավանի բաժինը վերանորոգվել է 1 տարի առաջ, բայց դեռեւս մտահոգիչ է զուգարանների հարցը, քանի որ դրանք ասիական ոճի են եւ գտնվում են ոստիկանության շենքից դուրս:
Վերանորոգման խիստ կարիք ունի ոստիկանության Վանաձորի բաժինը, որտեղ զգացվում է գույքի նորացման, համակարգիչների եւ այլ տեխնիկական միջոցների համալրման անհրաժեշտություն: Խիստ անբավարար է ոստիկանության Վանաձորի բաժնի զուգարանների սանիտարահիգիենիկ վիճակը՝ տեխնիկական մաշվածության պատճառով:
Անբավարար է գնահատվում նաեւ Սպիտակի բաժնի զուգարանների սանիտարահիգիենիկ վիճակը:

Բացի ոստիկանության Ստեփանավանի բաժնից՝ մյուս բաժիններում զուգարանները առանձնացված չեն տղամարդկանց եւ կանանց համար:

Վանաձորի, Բազումի, Ստեփանավանի, Տաշիրի բաժիններում չկա ընդհանուր ջեռուցման համակարգ, նշված բաժիններում ջեռուցումն իրականացվում է էլեկտրական սալիկների միջոցով:

<u>Ձերբակալված անձանց պահման պայմանները</u>

Ոստիկանության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքում, ինչպես նաեւ Ստեփանավանի բաժնում նախատեսված չէ ձերբակալված անձանց պահում: Նրանք տեղափոխվում են Վանաձորի բաժին:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am,
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Ոստիկանության Ստեփանավանի բաժնի ՁՊՎ-ն նախկինում գտնվել է նկուղային հարկում, որտեղ ջուր է լցվել, եւ այժմ պայմանները բավարար չեն ձերբակալված անձանց պահման համար:

Ոստիկանության բոլոր բաժինների ՁՊՎ-ներում խցերի դռան վրա փակցված են ձերբակալված եւ կալանավորված անձանց իրավունքներն ու պարտականությունները: Վանաձորի բաժնի ՁՊՎ-ի միջանցքում փակցված են նաեւ ձերբակալված անձանց համար թույլատրված իրերի ցանկը, օրվա կարգացանկը, թեժ գծի հեռախոսահամարը, ՀՀ ոստիկանության բաժինների ՁՊՎ-ների հասարակական դիտորդական խմբի անդամների անուն, ազգանունները:

Ձերբակալվածների օրվա կարգացանկը փակցված չէր ոստիկանության Տաշիրի բաժնում:

Ձերբակալվածների համար տեսակցությունների սենյակ կար միայն Սպիտակի, Տաշիրի եւ Ալավերդու բաժինների ՁՊՎ-ներում:

Ոստիկանության Վանաձորի, Սպիտակի, Տաշիրի եւ Ալավերդու բաժիններում զուգարանները գտնվում են ձերբակալված անձանց խցերից դուրս:
Լողանալու հնարավորություն կա Վանաձորի, Սպիտակի եւ Թումանյանի բաժինների ՁՊՎ-ներում, սակայն Թումանյանի բաժնի ՁՊՎ-ում, թեեւ կա ջրամատակարարում, ջրի ծորակը չի աշխատում, ինչի պատճառով ձերբակալվածները զրկված են լողանալու հնարավորությունից:

Բացառությամբ ոստիկանության Սպիտակի բաժնի ՁՊՎ-ի՝ մյուս բաժինների ՁՊՎ-ների սանիտարահիգիենիկ պայմանները գնահատվում են բավարար:

Եզրակացություն

Մտահոգիչ է այն, որ

- ոստիկանության բաժինների տեղակայման վերաբերյալ համայնքներում բացակայում են համապատասխան ցուցանակներ
- ոստիկանության բաժիններում չկան քաղաքացիների համար նախատեսված սպասասրահներ
- ոչ բոլոր բաժիններում են փակցված դիմումների, հայտարարությունների ներկայացման օրինակելի ձեւեր, ոստիկանության աշխատակիցների գործողությունների բողոքարկման օրինակելի ձեւեր
- ոստիկանության բաժիններում քաղաքացիներին չի տրամադրվում մասնագիտական խորհրդատվություն /իրավական, հոգեբանական, սոցիալական/
- բացակայում է բաժնի գործունեության վերաբերյալ քաղաքացիների առջեւ հաշվետվողականության ինստիտուտը
- հարցաքննությունների իրականացման պայմանները չեն ապահովում վկաների գաղտնիությունն եւ հետագա անվտանգությունը

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am,
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

- անբարենպաստ են ոստիկանության Վանաձորի եւ Տաշիրի բաժինների աշխատանքային պայմանները, բաժիններում հիմնականում գույքը շատ հին է, զգացվում է համակարգիչների և այլ տեխնիկական սարքավորումների համալրման անհրաժեշտություն
- Ոստիկանության Ստեփանավանի բաժնում, ինչպես նաեւ Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքում չկան ձերբակալված անձանց պահման համար անհրաժեշտ պայմաններ:

Առաջարկություններ

Համայնքների ղեկավարներին

- ոստիկանության բաժինների տեղակայման վերաբերյալ համայնքներում համապատասխան ցուցանակներ տեղադրել
- համայնքի տարածքում տարածք հատկացնել՝ ոստիկանության բաժնի գործունեության վերաբերյալ /տվյալ ժամանակահատվածում հանցագործությունների տարածվածության աստիճանի, հարուցված քրեական գործերի, բացահայտված հանցագործությունների մասին, քաղաքացիների կողմից ներկայացված և բավարարված բողոքների, դատարան հանձնված գործերի մասին/ տեղեկատվության փակցման համար

ՀՀ ոստիկանության պետին

- ոստիկանության բաժիններում առանձնացնել քաղաքացիների համար նախատեսված սպասասրահներ՝ ապահովված անհրաժեշտ գույքով
- ոստիկանության բոլոր բաժինների սպասասրահներում կամ միջանցքներում փակցնել դիմումների, հայտարարությունների ներկայացման օրինակելի ձեւեր, ոստիկանության աշխատակիցների գործողությունների բողոքարկման դիմումների օրինակելի ձեւեր
- ապահովել ամիսը մեկ անգամ ոստիկանության բաժնի գործունեության վերաբերյալ /տվյալ ժամանակահատվածում հանցագործությունների տարածվածության աստիճանի, հարուցված քրեական գործերի, բացահայտված հանցագործությունների, քաղաքացիների կողմից ներկայացված և բավարարված բողոքների, դատարան հանձնված գործերի մասին/ տեղեկատվության հասանելիությունը ոստիկանության շենքի ներսում

ՀՀ կառավարությանը

Ֆինանսական միջոցներ հատկացնել

- հարցաքննությունների իրականացման ժամանակ վկաների գաղտնիությունն եւ հետագա անվտանգությունը ապահովող պայմանների ստեղծման համար
- ոստիկանության Վանաձորի եւ Տաշիրի բաժինների աշխատանքային պայմանները բարելավելու, գույքը նորացնելու, համակարգիչների և այլ տեխնիկական սարքավորումների համալրման համար
- Ոստիկանության Ստեփանավանի բաժնում ձերբակալված անձանց պահման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար:
- ապահովելու իրավաբանի, հոգեբանի, սոցիալական աշխատողի առանձին հաստիքներ՝ քաղաքացիներին մասնագիտական խորհրդատվության /իրավական, հոգեբանական, սոցիալական/ տրամադրման նպատակով:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am,
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am